

Հայաստանն ու Անդրանիկը ԱՄՆ-ի 1917թ. արևելյան
քաղաքականության մեջ և Հայոց Ազգային խորհուրդը

1917թ. աշնան ու ձմեռվա իրադրությունը բազում վտանգավոր ու կենսական նշանակության խնդիրներ էր հարուցել հայ հասարակության առջև: Դրանց, նաև ամերիկյան մայիսյան այն նախաձեռնությանը, որն ի հայտ էր եկել Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի միանալուց քիչ հետո, հարկավոր էր լուծում տալ ներքին և այրտաքին ծայր աստիճանի բարդ պայմաններում: Այդ նախաձեռնությունը Է.Ռութի առաքելությանը իրականացվող մեծ ծրագրի մասնիկն էր: Ամերիկյան մասնագետների խումբը էր գործուղվել Ռուսաստան՝ նրա պատերազմական կարիքներն ու ռազմունակությունը վերականգնելուն միտված քայլերը սահմանելու համար¹:

Գնահատելով Փետրվարյան հեղափոխության հետևանքներն անբողջ Ռուսաստանի համար ու հաշվի առնելով Կովկասյան ճակատի էական թուլացման վտանգը՝ Թիֆլիսում հյուսիսամերիկյան տերության հյուպատոս Ֆ.Վ.Սմիթն առաջարկել է կազմավորել արևմտահայ մեկ զորախումբ² (զորամաս, զորաբաժին, դիվիզիա) ռուսական բանակի կարգադրության ներքո և այն հանձնել Անդրանիկ Օզանյանի հրամանատարությանը: Դիվանագետը մայիսի 29-ին հանդիպել է Անդրանիկին, նրան ուղեկցող Լ.Լյուլեճյանին³ և թարգմանիչ Վ.Թոթովենցին ու քննարկել այդ նախագիծը⁴: Միացյալ Նա//-323 հանգներն ու նրանց եվրոպական դաշնակիցները պատրաստ էին զենքով ու հանդերձանքով ապահովել այս միավորումը՝ գործողություններ հսկելու իրավունքով: Նախնական կազմակերպական ծախսերը հոգալու համար հյուպատոսը տրամադրել էր 10 հազար դոլար: Դիվիզիան մարտնչելու էր Արևմտյան Հայաստանում՝ աջակցելով անգլիացիների ռազմական գործողություններին Պարսկաստանում կամ նրանց առաջխաղացմանը դեպի Մոսուլ:

¹ United States National Archives, Washington D.C., Record Group 59 General Records of the Department of State, class 763.72/document 6430 (այսուհետև՝ US NA):

² Քաջունի Ե., Հայկական առանձին հարուածող զորամասը: Ժեներալ Անդրանիկ: Պոսթոն, 1921, էջ 230: Անդրանիկի կիրառած եզրույթը: Արևմտահայ խորհրդի ձևակերպմամբ՝ զորաբաժին:

³ Լևոն Կարապետ Լյուլեճյանը (1892-1974) Խարբերդի Եփրատ քուլեջի պրոֆեսորների որդին ու էդբայր էր: Դասավանդել է քաղաքի սբ.Ստեփանոս եկեղեցու կից գոցօղ դպրոցում: 1915թ. հունիսին դայմադամի ձեռքով խոշտանգված ու ԱՄՆ-ի հյուպատոսարանում թաքնված մեծ եղբոր՝ Տոնապետի հետ փախել ու 1916թ. հասել է Երզրում: Եղբայրը օգնել է Երզրումում ԱՄՆ հյուպատոսին գաղթականների հնամելու գործում ու 1917թ. այնտեղ մահացել է տիֆից: Իսկ Լևոնը հասել է Թիֆլիս ու միացել Անդրանիկին: 1925թ. Ֆրեզնոյում եղել է «Մշակ» շաբաթաթերթի խմբագիր: «Անդրանիկի բեռնով Առաքելոց վանքի կռիւը և Խալիլ բեգի սպանութիւնը» (Պէյրուք, 1966), «Կաքավներ ալ տուն պիտի չվերադառնան» (Պէյրուք, 1973) գրքերի հեղինակ է:

⁴ Մարմարյան Ա. [Թոթովենց Վ.], Չոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ.Պոլիս, 1920, էջ 263-264; Կարինեան Գ., Ազգային հերոս Ջոր. Անդրանիկ եւ իր պատերազմները, Փարիզ, 1953, էջ 171-174; Ղարիբջանյան Գ.Բ., Ժողովրդական հերոս Անդրանիկ, Ե., 1990, էջ 94; Նազարյան Ա.Ս., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Ե., 1999, էջ // -323 116-117; Այվազյան Հ., Չորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Ե., 2004, էջ 76:

Անդրանիկը կազմել է ռազմական գործադրական քարտեզ ու փաստաթղթեր, որոնք հունիսի 2-ին հանձնել է Ֆ.Վ.Սմիթին, իսկ հյուպատոսը դրանք առաքել է Պետրոգրադ՝ իր վերադաս՝ դեսպան Դ.Ռ.Ֆրենսիսի, անգլիացի, ֆրանսիացի և իտալացի պաշտոնակիցների, ինչպես և Ա.Ֆ.Կերենսկու հետ քննարկելու նպատակով⁵: Վավերագրերի պատճեններն ուղարկել են եվրոպական մայրաքաղաքներ, որտեղ դրանք հավանության են արժանացել: Այնուհետև՝ օգոստոսին, քարոզիչ Է.Յարոուն Ֆ.Վ.Սմիթի ներկայությամբ ծանոթացնում է Անդրանիկին երկու բրիտանացիների՝ գեներալ Օ.Շոռի և Ջ.Գրեյսի հետ: Քառյակը քննարկել է 8 գնդերի հավաքագրման խնդիրները՝ ընդունելով յուրաքանչյուր գնդի 3 գումարտակային կազմը: Համաձայնության են եկել մարտիկների 10-20 հազ. ընդհանուր թվի վրա՝ արտաքին ֆինանսավորման ու 150 բրիտանացի խորհրդականների տրամադրման պայմանով⁶: Հայոց կենտրոնական Ազգային խորհուրդը փորձ է արել խլել բրիտանացիների հետ շփման նախաձեռնությունը⁷, այնուամենայնիվ, ինչպես Պետրոգրադում, այնպես էլ Թիֆլիսում խորհրդի անդամները չէին շտապում Ֆ.Վ.Սմիթի հետ բանակցություններ ձեռնարկել: Հետևաբար, իրավիճակը սառեցվել է մինչև աշուն:

1917թ. նոյեմբերին՝ երբ ռուսական հեղափոխության նոր խորացումն իրականություն դարձրեց Կովկասյան ռազմաճակատի լիակատար փլուզումը, ամերիկացիները դարձյալ նախաձեռնող դուրս եկան: Ամսի 8-ին Մ. Պապաջանյանը գեկուցում է ՀԱԽ-ում փոխգնդապետ Ա.Խ.Թորգոմի հետ Բաքվում իր ունեցած զրույցի մասին: Խոսքը 10-15-հազարանոց արևմտահայ դիվիզիայի մասին էր. այն պետք է աջակցություն ցույց տար անգլիացիներին Պարսկաստանում: Այդ զորախումբը կազմավորելու համար պահանջվում էր 3 ամիս, Դաշնակիցները խոստանում էին ապահովել 324 վել հրահանգիչներով և հանդերձանքով, ընդհանուր ծախքը ռուսական կառավարության վրա էր: Ա.Խ.Թորգոմը պատրաստ էր Ազգային խորհրդի լիազորություններով մեկնել արտերկիր ու բանակցություններ վարել: Նույն բովանդակությամբ հուշագիրը՝ ֆրանսերեն, հղել է ՀԱԽ-ին⁸:

Նոյեմբերի 17-ին փոխգնդապետին անձամբ ունկնդրել են այդ ատյանում, իսկ ամսի 30-ին խորհրդի նախագահ Ա.Ահարոնյանը գեկուցել է իր գործնկերներին Փարիզում Հայոց ազգային պատվիրակության ղեկավար

⁵ Մարմարյան Ա., նշվ.աշխ., էջ 264, 269; հուշագրի ամփոփումը տե՛ս Չոբուրյան Է., Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, Կ.Պոլիս, 1920, էջ 49-51; Քարտեզի նկարագրումը տե՛ս Միհրանեան Ա., Ինչպե՞ս պետք է գրաւել Թրքահայաստանը, Կ.Պոլիս, 1921, էջ 8:

⁶ Զօրավար Անդրանիկի Կովկասեան ճակատի պատմական օրագրութիւնը 1914-1917, Պոսթոն, 1924, էջ 62-63 (այսուհետև՝ Պատմական օրագրութիւնը); Hovannisian R., Armenia on the Road to Independence, 1918. Berkeley and Los Angeles, 1967, p.82; Arslanian A. The British Decision to Intervene Transcaucasia during World War I (The Armenian Review, Boston, 1974, vol.27, N° 2, p.151).

⁷ Պատմական օրագրութիւնը, էջ 69:

⁸ Հայաստանի Ազգային արխիվ, ֆ.222, ց.1, գ.141, ք.21, 36 (այսուհետև՝ ՀԱԱ):

Պողոս Նուբարից ստացած հեռագրի մասին⁹: Ըստ այդմ՝ վերջինը հաստատում էր բանակաշինության գործում արտաքին աջակցության հեռանկարն ու հայցում էր պաշտոնական բանակցություններ սկսելու արտոնություն¹⁰: Խորհրդի անդամների արձագանքն ընդհանուր առմամբ դրական էր, սակայն որևէ որոշման չէին հանգում. նման անորոշությունը վնասում էր ընդհանուր իրավիճակին և անկողմնակալ արտացոլում դրա բարդությունը:

Կենտրոնական խորհուրդը, հաշվի առնելով դիվիզիայի՝ ռուսական կառավարությանը ենթակա լինելու հանգամանքն ու Գ.Փաստրմաճյանի՝ արտգործնախարար Մ.Ի.Տերեսչենկոյի հետ հանդիպման¹¹ մասին զեկուցագիրը, Արևմտյան Հայաստանը դիտարկում էր որպես ապագա Ռուսաստանի մաս: Հետևաբար, նա իր կազմում էր ներառում Արևմտահայ Ազգային խորհուրդի Բյուրոյի երկու անդամի: Սակայն Արևմտահայ խորհուրդը ցանկանում էր տեսնել իր հայրենիքը որպես անջատ ու անկախ միավոր¹²: Ուստի նա հրավիրում էր ՀԱԽ-ը՝ համատեղ լսումների ու միասնական որոշումների կայացման համար: Եվ այդ ամենը Կովկասյան ռազմաճակատի աղետալի քայքայման համատեքստում: //-325

Նկատի ունենանք, որ 1917թ. սեպտեմբերի դրությամբ, ռազմական դիրքերում կար 880 հազ. զինվոր, սակայն հոկտեմբերին 220 հազ. մարդ լքեց խրամատներն, իսկ մնացած անձնակազմից միայն 130 հազ. հոգի (այն է՝ 20 տոկոսից պակաս) տեղակայված էր 1914թ. պետական սահմանից դուրս: Նոյեմբերին դիրքերում մնաց լոկ 60 հազարը. սա խաղաղ պայմաններում նվազագույն պահանջվող թիվը էր, բայց հնարավոր հարձակումը հետ մղելու համար հարկավոր էր հավաքագրել մինչև 200 հազար ռազմիկների: Իսկ հայերը այդ պահին ունեին ընդամենը 15 հազ. մարտիկից ոչ ավելի¹³: Դեկտեմբերին՝ Երզնկայի զինադադարին զուգահեռ, Ֆ.Վ.Սմիթը գրում էր Վանից Տրապիզոն ընկած ռազմաճակատի լիակատար բարոյալքման մասին¹⁴: Այդ ընթացքում ամեն օր երկաթուղային փոխադրմամբ մեկնում էր մարդատար

⁹ Նույն տեղում, թ.52 շրջ.: Ահա հեռագրի տեքստը. «Զոր. Անդրանիկ, Կոչ կ'ընեն քեզի և քու բոլոր զինակիցներուդ որ կրցածիդ չափ դուրս բերես բոլոր ուժերդ և կարելի եղած չափով պաշտպանես Վան, Բիթլիս և Կարին: Նյութականդ ապահոված է: Նուբար»՝ Պատմական օրագրութիւնը, էջ 65; Կարինեան Գ., նշվ.աշխ., էջ 174:

¹⁰ Այդ պահին Ֆ.Վ.Սմիթը դիմում է իր կառավարությանը՝ նոր հայկական զորքերի զգեստավորմանը 1 մլն.դոլ. հատկացնելու առաջարկով: Քիչ ավելի ուշ Լոնդոնում ԱՄՆ դեսպան Ու.Պեյջը հավաստում է պետքարտուղարին իրենց եվրոպացի զինակիցների վճռականությունը՝ հայերի զինուժը ֆինանսավորելու առնչությամբ: Տե՛ս Papers Relating to the Foreign Relations of the United States. 1918 Russia, in 3 vols., vol.II, Wash., 1932, p.591-593 (այսուհետև՝ Papers Relating); Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., соств. и пер.Г.Г.Махмурия, Е., 2012, с.17 (այսուհետև՝ Армения в документах):

¹¹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. և կազմ.Ա.Վիրաբյան, կազմ.Գ.Ավագյան, Ռ.Գրիգորյան, Ա.Կիրիմյան: Ե., 2004, էջ 115:

¹² Այվազյան Հ., նշվ.աշխ., էջ 85:

¹³ Հարկավոր զորքերի գնահատումը գեներալ Ջ.Հարբորդի առաքելության կողմից՝ Армения в документах, с. 327; տե՛ս նաև ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, թ.50 շրջ., 53 շրջ.-54:

¹⁴ US NA, RG 59, 861.00/848:

երեք կառախուճ¹⁵:

Ճակատի փլուզման իրողությունը ստիպում էր հայերին ստանձնել ավերված Արևմտյան Հայաստանն ու պաշտպանել Կովկասը. հետևաբար երկու խորհրդի շահերը միահյուսվում էին: Սակայն ՀԱԽ-ը միանգամից հրաժարվեց երկիրը պահելու կամ այնտեղ եռանդով դիմադրելու հնարավորությունից¹⁶: Նա իր ուշադրությունը սեվերեց Կովկասի պաշտպանության վրա, այնինքն՝ արևմտահայերի ռազմունակ ուժերը դառնում էին կովկասյան անվտանգության բաղադրիչ: Անգամ այդ խնդիրը լուծվում էր ծայրաստիճան դանդաղ ու առանց նախաձեռնության՝ ՀԱԽ-ը շատ վատ էր ընկալում վտանգի իրական սրությունը¹⁷: Թիֆլիսում գործող Ֆրանսիայի ռազմական կցորդ Պ.Օ.Շարդինյին, օրինակ, Ա. Ահարոնյանի հետ խոսելիս զարմանում էր նման պահվածքի վրա¹⁸:

Կատարելով ապրիլի 26-ի կարգադրությունը՝ ռուսական հրամանատարությունը ստեղծեց Թուրքահայաստանի գեներալ-կոմիսարիատը՝ գեներալ-լեյտենտանտ Պ.Ի.Ավերյանովի և Հ.Ջավրիկի գլխավորությամբ: ՀԱԽ-ը ընտրել է Թ.Նազարբեկյանի Հայկական զորաբանակի (կորպուսի) կազմավորման համար Հատուկ կոմիտե, որը պետք է գործեր վերոնշյալ կոմիսարիատին կից: Այդ մարմինը դիտարկում էին որպես հայկական կառավարության տիպար՝ ապագա ինքնավարության համար, իսկ կորպուսը հայկական բանակի //326 սաղմն էր, թեև կոմիտեն փող չուներ կոմիսարիատին տրամադրելու և զորամասեր կազմելու համար: Արևմտահայերի խորհուրդն էլ հենվում էր Դաշնակիցների և Հայ դատի միջազգային կարգավիճակի, Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության վրա: Ինչ վերաբերում է դիվիզային, այն ենթարկվում էր ռուսական բանակին: Առկա իրավիճակում այդ զորախմբի հրամանատարի նշանակումը դարձել էր ոչ թե ռազմական, այլ քաղաքական խնդիր՝ առաջացնելով տեղական, իշխանական օղակների միջկուսակցական ու ներկուսակցական շահերի բախում:

ՀԱԽ-ը, որտեղ ՀՀԴ-ն էր գերիշխում, ու նրա Հատուկ կոմիտեն առաջարկեցին, իսկ հետո առարկեցին դաշնակցության հետ իր կապերը վերջերս խզած Անդրանիկի թեկնածությանը: Դրա փոխարեն նրանք առաջարկում էին մարտերի ղեկավարման համար ոչ պիտանի նոր ատյան՝ Հ.Բեկզադյանի, Ռ.Տեր-Մինասյանի, Վ.Փափազյանի ու Սեպուհի մասնակցությամբ¹⁹: Նշվում էր Ա.Օզանյանի ռազմական կրթության բացակայությունը,

¹⁵ Էշելոն: ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.86:

¹⁶ Քաջունի Ե., նշվ.աշխ., էջ 231; Չելեպյան Ա., Ջորավար Անդրանիկ, Ե., 1990, էջ 402-403:

¹⁷ Տե՛ս օրինակ Ա.Օզանյանի հոկտեմբերի 7-ի հայտարարությունը Ազգային համախորհրդակցության 6-րդ նիստում՝ Համահայկական խորհրդակցություններ (11912-1920թթ.), էջ 195: Կամ ՀԱԽ-ի նոյեմբերի 30-ի նիստում հնչեցրած կարծիքը, թե ռուսական բանակի ընդհանուր նահանջը տեղի չի ունենա՝ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.54 շրջ., 85:

¹⁸ Նույն տեղում, ք.70:

¹⁹ Սովորաբար տալիս են Ռ.Տեր-Մինասյանի, Վ.Փափազյանի և Սեպուհի անունները (Նազարյան Ա.Ս., նշվ.աշխ., էջ 180), բայց ՀԱԽ-ի ղեկավարների 15-ի նիստում առկա է նաև Հ.Բեկզադյանը՝ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.80:

թեև նորանշանակ եռյակում (կամ քառյակում) էլ չկային կադրային զինծառայողներ: ՀԱԽ-ում անտեսում էին պաշտպանության հեղափոխական ձևերի և բոլոր ռազմունակ բնակիչներին զանգվածաբար զինելուն անհրաժեշտությունը, հսկում էին հասարակությանը կոչերով դիմելու մենաշնորհն ու ռազմական հարցերին մոտենում էին ելնելով նախ քաղաքական նկատառումներից:

Այնինչ հայերիս համար պահի միակ ու կենսական նշանակություն ունեցող քաղաքականությունը պաշտպանությունն էր: Նման իրավիճակում լավագույն վարվելակերպը յուրաքանչյուր խնդրի «ապաքաղաքականացումն» է՝ առանց տեսությունների և բարդացումների, առարկայական կարգավորումն է: 1917թ. սկզբին դաշնակիցների փորձագետները, իսկ ամռանը ամերիկացիներն էլ Ռուսաստանի հիմնական ռազմական խոչընդոտն են համարել թերզարգացած փոխադրամիջոցներն ու անկատար մատակարարումը: Ամենաթույլ տեղը ոչ այդքան զինվորների կամ պաշարների պակասություն է եղել, որքան տեխնիկական ու կազմակերպչական բացերն էին²⁰: Սա անբողջապես վերաբերում էր նաև Կովկասյան ճակատին, որտեղ զորամասերը չէին ստանում նպար (պարեն), զենք ու ռազմանյութ առկա առատ պահեստներից²¹: ՀԱԽ-ի ղեկտեմբերի 15-ի նիստում Անդրանիկն իր մտահոգություն հայտնեց. եթե ներկա աղետալի պայմաններում Խորհրդի անդամները հրաժարվում են Դաշնակիցների օգնությունից՝ ելնելով տեսական նկատառումներից, ապա նրանք ինչպե՞ս են պաշտպանելու բնակչությանը: //-327

Նկատենք, որ ղեկտեմբերի 1-ին և 22-ին Փարիզում տեղի ունեցած խորհրդաժողովներում մասնակիցները որոշել են օգնել ու պաշտպանել «հայերի մնացորդներին՝ ոչ միայն Պարսկաստանում առկա իրենց Միջագետքյան զորքերի թևն ու Կովկասը վտանգից զերծ պահելու համար»: Ամսի 10-ի դրությամբ Անգլիայի կառավարությունը իսկապես որոշել է հայերին առաջին գումարն առաջարկել, իսկ ղեկտեմբերի 29-ին Լոնդոնում հավատարմագրված ԱՄՆ-ի դեսպանը պետքարտուղար Ռ.Լանսինգին է առաքել նոր ստացած հուշագիրը: Դա բացատրում էր ռազմական ֆինանսավորման ու սպահրահանգիչներին շտապ տրամադրելու անհրաժեշտությունը: Փաստաթղթում ասվում է, թե Հայաստանը «միակ պատվարն է թուրանական շարժման զարգացուման դեմ»²², և որ նրա զորեցուցումը կարող է Բեռլինի ուժերով Բաղդադի երկաթուղին գրավելուց ավելի վտանգավոր իրադրու-

²⁰ Papers Relating, 1918 Russia, vol.I, p.135, 137-139, 148; Խնուս գավառի կոմիսար Ն.Նիկոլենկոյի նույնանման գնահատականները ՀԱԽ-ի ղեկտեմբերի 1-ի նիստում՝ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.55 շրջ.:

²¹ Կարինեան Գ., նշվ.աշխ., էջ 185-186; Այվազյան Հ., նշվ.աշխ., էջ 111:

²² Армения в документах, с.20. Արևմտահայերի ուժերով հիմնադրված Հայաստանի Ապահովության խորհուրդը Թիֆլիսում տեղակայված բրիտանական ռազմական առաքելությանը որոշակի գումար է տրամադրել և վերջինիս միջոցով զինապարտների ընտանիքներին հատկացնում էին պարենավճար: Չելեայան Ա., նշվ.աշխ., էջ 368:

յուն կանխել:

Երկար ձգձգման ու ծրագրին մասնակցելու մասին անգլիացիներին հայտնելուց հետո²³, ԱՄՆ-ն վերջ ի վերջո խուսափել է ծախսից ու ֆինանսավորման խնդրիը թողել եվրոպացիներին: 1918թ. ապրիլի 3-ին Ռ.Լանսինգը պարզաբանել է. «Քանի որ Միացյալ Նահանգները Թուրքիայի հետ պատերազմական դրության մեջ չէ, վերոհիշյալ բնույթի գործողությունները բացառվում են իր կառավարության համար»²⁴: Այդ հատկանշանակ որոշումն արևմտահայ զորամասի կազմավորումը ամբողջությամբ թողել է բրիտանական հոգածությանը:

Հավելենք, որ ռազմաճակատի հրամանատարությունը²⁵, Հայկական զորաբանակի հրամանատար Թ.Նազարբեկյանը, գեներալներ Յ.Բազրատունին ու Մ.Արեշյանն ընդունում էին ամբողջ մտահղացումն և, բացառությամբ Թ.Նազարբեկյանի, հավանություն էին տալիս Ա.Օզանյանի նշանակմանը: Ամերիկացիներն ու նրանց եվրոպացի դաշնակիցներն իրավացիորեն կարծում էին, որ ռազմական պատմությունն ու մարտերը զորապետին արագ ձևավորում են զորապետին²⁶, քանի որ կռվում կարևորվում են միայն արդյունքը, զինվորների և բնակչության վստահությունը: Իսկ 1918թ. սկզբին, ընդհուպ Սարդարապատ, ՀԱԽ-ի անդամներն ու զորքի նրանց հիմնակազմը նույնպես չեն ապահովել կազմակերպական կամ քաղաքական շոշափելի նվաճումներ: ՀԱԽ-ը չէր ցանկանում երգերում տեղափոխել ռազմական շտաբը, որպեսզի այդ ամրոցի ռազմա-/-328 մթերքն ու նպարը՝ Մամախաթունի, Տրապիզոնի, Սարիղամիշի և Կարսի պահեստների հետ, ծառայեին հայկական բանակի կարիքներին: Եվ եթե Վանի պաշտպանությունը տևել է մինչև 1918թ. ապրիլի 6-ը, ապա Հայկական կորպուսի պատասխանատվության ներքո գտնվող երգրումը՝ որտեղ Անդրանիկը պետք է դիմակայեր մինչև այդ զորաբանակի հիմնական ուժերի ժամանումը, ՀԱԽ-ի և նրան ենթակա զինված ուժերի ակնհայտ նենգադուլի պայմաններում²⁷, հայերը ստիպված էին թողնել մարտի 12-ին:

Ֆ.Վ.Սմիթը նշել է, թե ՀԱԽ-ի որդեգրած հայերի հեռանալու քաղաքականությունը «կայանում էր վրացական ղեկավարությանը հետևելու մեջ»²⁸: Նրա վարվելագիծը, ինչպես և զինակցին գտնելու հույսերը իրենց չարդարացրին²⁹: Հայկական հարցը նվազեց մինչև անդրկովկասյան հարաբերութ-

²³ Армения в документах, с.16.

²⁴ US NA, RG 59, 763.72/9295.

²⁵ Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 63:

²⁶ Սիմոնյան Հ.Ռ., Անդրանիկի ժամանակը, 2 գրքով, Ե., 1996, գիրք Ա, էջ 676:

²⁷ US NA, RG 59, 763.72/13362; Այվազյան Հ., նշվ.աշխ., էջ 130, 134, 137-138, 141, 147; Կարինեան Գ., նշվ.աշխ., էջ 81: Կորպուսի և դիվիզիայի պատասխանատվության գոտիների մասին տե՛ս Կարինեան Գ., նշվ.աշխ., էջ 52:

²⁸ Армения в документах, с.30.

²⁹ Դեկտեմբերի 21-ին Ա.Չխենկելին տեղեկացրել է ՀԱԽ-ի նախագահ Ա.Ահարոնյանին, որ վրացիները մեկ զինվոր էլ չեն ուղարկի ռազմաճակատ, տե՛ս Այվազյան Հ., նշվ.աշխ., էջ 112, 131; Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г. - июль 1918 г.). Воспоминания ге-

յունների մանրադրամի չափով:

Այնուհետև, Արևելյան Հայաստանի սահմաններում 1918թ. ապրիլի 25-ին իրականացված Կարսի խայտառակ հանձնումը բուն ՀԱԽ-ի ռազմական ու քաղաքական ծանրագույն սխալն էր, քանի որ ռազմավարական նշանակության ամրոցները հանձնում էին թշնամու հետ որևէ համաձայնագիր կնքելուց առաջ: Իսկ Ռուսաստանում ծայր առած քաղաքացիական պատերազմը շատ շուտ ու հանդիչ կերպով հաստատել է, թե ռազմական կրթությունը ինքնին հաղթանակի լիակատար երաշխիքներ չի տալիս: Հեղափոխության և հսկայական ճակատի բարոյալքման, տարբեր երկրների շահերի և կառավարման մարմինների բազմության պայմաններում ՀԱԽ-ը կարգավորում էր իր ուժերից ակնհայտորեն դուրս գտնվող խնդիրը: Վիթսարի ճգնաժամի պայմաններում իշխանության ու հայերին կազմակերպելու հանդեպ մենաշնորհի հաստատելու ձգտումը, ինչպես և սեփական գործունեությունը Սեյմին ենթարկելը, նրանից ակնկալելով երկրամասի միասնական պաշտպանություն, երկուսն էլ ոչ պիտանի լուծումներ էին:

Ի վերջո, դեկտեմբերի 20-ին Ա.Օզանյանը նշանակվեց դիվիզիայի հրամանատար, ընդ որում՝ գաղտնի քվեարկության համար կազմվել է ընտրողների առանձին խումբ՝ հավասար չափով ներգրավելով երկու Ազգային խորհուրդների ներկայացուցիչներին³⁰: Ու //-329 թեև ազգային հերոսն իր լիազորություններ է ստացել արևմտահայերի և արևելահայերի իրավազորությունը մարմնավորող խբից, անհրաժեշտ սատարումը, այդուհանդերձ, ինքը չի ստացել: Եվ քանի որ Կենտրոնական խորհրդում 1917թ. դեկտեմբերի 15-ին, 19-ին, 20-ին, 22-ին ու 1918թ. հունվարի 14-ին և փետրվարի 5-ին հնչեցրած նրա ելույթները դեռևս չեն հրատարակվել, մեր առաջարկվող հավաքածուն էապես ճշգրտում է անցուդարձի նախորդ նկարագրումները³¹: Մանավանդ, երբ նրանց հեղինակների համար հիմք էին ծառայել 1927թ. լրագրային նյութերը:

№ 1 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն³²:

№ 39 ԼԹ Թիֆլիս, 15 դեկտեմբերի 1917թ., 7:00-13:00

«Բացակա էր՝ Պ.Ջաքարյան: Ներկա էր նաև Արևմտահայ խորհրդի Բյուրոն՝ Վ.Փափազյան, Կ.Սասունի, Ա.Դարբինյան, Հ.Կուզիկյան, Հ.Գալիկյան, Անդրանիկ: Հատուկ անդամներ՝ Արամ Մանուկյան, Վ.Բաբայան, նաև Դ.Կանայան, Ա.Ջանալյան, Հ.Ջավրյան...»

Քննության է դրվում խառն նիստի օրակարգի նյութը՝ թուրքահայերից

нерала Ф.И.Назарбекова, сост.Г.М.Шамурян, Г.А.Аветисян (Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, № 3, էջ 49-50):

³⁰ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.103 շրջ.:

³¹ Դեկտեմբերի 15-ի նիստը իր համատեքստում համառոտ ներկայացվել է. Սիմոնյան Հ.Ռ., նշվ. աշխ., էջ 673-674: Տե՛ս նաև Այվազյան Հ., նշվ. աշխ., էջ 115:

³² ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.78-82 շրջ.:

դիվիզիա կազմելու խնդիրը:

Խ.Կարճիկյան գեկուցանում է. Ազգային Խորհուրդը հատուկ մարմին է ընտրել հոգալու ճակատի պաշտպանության գործը: Այդ մարմինը լիազորված է նաև Թուրքիայի հայերից դիվիզիա կազմելու³³: Քանի որ դիվիզիա կազմելու իրավունքը պաշտոնապես պատկանում է Հայաստանի կոմիսարիատին՝ Հատուկ կոմիտեն հարկ տեսավ առաջարկելու Ազգային Խորհրդին մի խառն նիստ գումարել Արևմտահայ Բյուրոյի բոլոր անդամների և Հայաստանի կոմիսարի օգնականի մասնակցությամբ:

Նախագահը առաջարկում է... զբաղվել դիվիզիայի կազմության խնդրով:

Անդրանիկ. Երեկ պաշտոնապես իրան ներկայացել են երեք հոգի, որոնք Ռուսահայ խորհրդի կողմից, իրենց ասելով, պիտի նստեն գեն.Պ.Ի. Ավերյանովի մոտ: Ես պաշտոնական գրություն ուզեցի, որից երևա, թե Ազգային Խորհուրդը նրանց ընտրել է, և գեն.Պ.Ի.Ավերյանովն էլ համաձայնել է, որ հետո կարողանամ հետները խոսել: //-330 Նրանք թուրք չներկայացրին: Հիմա հարց եմ տալիս. ի՞նչ իրավասություն ունին այդ երեք անձը (Ռ.Տեր-Մինասյան, Վ.Փափազյան և Սեպուհ) և արդյոք դու՞ք եք ընտրած: Ես իրանց ասի, որ կլսեմ միմիայն Ռուսահայ և Թուրքահայ խորհուրդների միասին ընտրած մարմնին: Մյուս կողմից բժ.Յ.Ջավրյանն ինձ ասում է, թե վաղը երթանք գեներալ-լեյտենանտ Պ.Ի.Ավերյանովի մոտ և նա քեզ կնշանակել դիվիզիայի իրամանատար: Այս լսելով, երեք անձերն ասին բժիշկին. եթե դու այդ դիրքը կբռնես, այն ժամանակ մենք չենք աջակցի³⁴:

Նախագահը հայտնում է, թե խնդիրը հասունացած չէ, թե ինքն իրազեկ չէ հարցի էության, և թե հարցի քննությունը պետք է հետաձգել: Ժողովը համաձայնում է:

Անդրանիկ. Ես ևս պաշտոնապես դիմեցի ձեզ, որ խառն ժողով գումարեք, բայց չգումարեցիք: Միշտ այդպես եք եղած: Մոմենտն այսօր չէ դարձած վտանգավոր. 15 ամիս առաջ այդպես էր: Եթե ձեր որոշումն անբակտելի էր. կարելի չէ՞ր, որ ձեր որոշման պատճենը ուղարկեիք Արևմտահայ Բյուրոյին, որ գուցե բան ունեին ավելցնելու՝ ասեին: Ինչպե՞ս իրավունք համարեցիք մինակ որոշել այդպիսի մի խնդիր: Այդ սանձգությունն անտանելի է...

Երբ արհամարում էք Արևմտահայ Խորհուրդը և ձեր որոշումը չեք հայնում նրան, երբ հարցի քննության ժամանակ ինձ չեք հրավիրում, որ բարոյական իրավունք ունիմ ներկա լինելու, ես չեմ կարող ընդունել ձեր որոշումները և ձեր վարվելակերպը թուրքահայ հատվածի դեմ: Պիտի առանց նրանց վճիռ չանելիք, եթե արիք, զոնե պիտի հայտնեիք: Եթե դուք

³³ ՀԱԽ-ի նոյեբերի 29-ի նիստում, երբ Հայկական կորպուսի կազմավորման համար ստեղծել են այս կոմիտեն, արևմտահայերին կամ նրանց զորքին որևէ անդրադարձ չի եղել, ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.52:

³⁴ Վերապատմվել է. Պատմական օրագրությունը, էջ 69-70; Կարիսեան Գ., նշվ.աշխ., էջ 46-48, 177-179:

մեկ ամիս է, որ մտածում էք այդ խնդրի մասին, ես 7 ամիս առաջ եմ քարտեզն ու կարծիքները տված ամերիկյան հյուպատոսին: Ինձ հարցրել են՝ եթե օրը գա՝ քանի մարդ կարող են հանել, ասել են 10.000³⁵, եթե ազգիս երկու կողմի ներկայացուցիչները համաձայնեն: Կոնսուլը գնում է Պետրոգրադ, խորհրդակցում երեք պետությանց կոնսուլների հետ, իմ քարտեզից ու կարծիքներից պատճենը հանելով ուղարկում են չորս պետությանց: 25 օր առաջ հրաման է գալիս կազմելու դիվիզիա, և ինձ կանչում են Ռոստովից և ասում են գործի գլուխ անցիր: Ստացա և Պողոս փաշայի գրությունը: Եթե 7 ամիս առաջ եմ սկսած, ինչպե՞ս չասեմ թե դուք իրավասու չեք երկու հատվածներու անունով գործելու...

Արամ Մանուկյան. Նախաձեռնությունը պատկանում է Ն.Նիկոլենկոյին, որ Խնուսի շրջանում իրավունք էր ստացել մի գունդ կազմելու... [Յետո] միլիցիայի իրավունք ստացավ... Երբ ֆրոնտը քայ-//-331 քայվեց, Ազգային խորհուրդն ընտրեց մի մարմին, որին 2 ամսով հանձնեց զինվորական գործի կազմակերպությունը, նաև թուրքահայ դիվիզիա կազմակերպելը... [Այն] դիվիզիայի կազմության գործին հսկելը թողեց Յովհաննես Բեկզադյանին և Ռուբենին: Ռուբենը հայտնեց, թե որոշած է հրավիրել Վ.Փափազյանին և Սեպուհին, հատուկ կոմիտեն համաձայնվեց: Այս է իրողությունը... Մենք ընդունել ենք մի քանի սկզբունքներ... 1) Դիվիզիան պետք է լինի Յայաստանի գործը, 2) [այն] կազմվում է Յայաստանի կոմիսարիատին կից: 3) [Ջորամասը] եվրոպական մտքով կանոնավոր գործ պիտի լինի... 4) Դիվիզիայի և կորպուսի միակ նպատակը պաշտպանողական պիտի լինի... [Կորպուսի] հրամանատար կազմը պիտի ընտրեր եռանդամ կոմիտեն: Նույնը մտադիր ենք անելու և դիվիզիայի կազմության մեջ ... Բայց եռանդամ կոմիտեն լուծվեց, և ստեղծվեց ութանդամ մի մարմին, որ պետք է օգտագործե զինվորական միությունը, կուսակցությունները և հասարակական ուժերը իր նպատակին հասնելու համար...

Տ.Բեկզադյան. ...Դիվիզիայի գործով երկու օր առաջ ընտրված հատուկ կոմիտեն է սկսել զբաղվել, և ահա այսօր թուրքահայ Բյուրոն հրավիրված է խորհրդակցության... Եթե դուք վաղը, իբր լիազորներ, համարեք անգործնական, կարելի է փոխել:

Անդրանիկ գոհանում է այդ հայտարարությամբ և նորից պատմում է իրան եղած առաջարկի մասին, որ արձանագրված է արդեն:

Ըստ էության քննության է դրվում դիվիզիայի հարցը...

Անդրանիկ. Խ.Կարճիկյան ասավ թե գործիք չդառնանք և մեղադրեց եվրոպացիներին: Փաստն այն է, որ եթե Բաղդադ և Երուսաղեմ գրաված չլինեին՝ Կովկասը վտանգված էր: Այստեղի իշխանությունը նրանց է ձեռք մեկնում դրամի, մինչև իսկ ալյուրի գործի համար: Ես դեռ մտածում եմ, թե

³⁵ Թվացույցը դժվարընթեռնելի է, հնարավոր են 10 կամ 40 հազարը, հետևապես կանգ ենք առել նվազագույն հնարավոր տվյալի վրա: Յետագայում նշում էին 20 կամ 30 հազարի հասնող զորամասի մասին:

գուցե պետք է թուրքերի հետ հաշտվել, եթե ֆրոնտն այսպես քայքայվի: Բայց խնդիր է, թե թուրքն ինչ է անելու, երբ Դադստանը և այստեղի թուրքերը ոտի կանգնեն: Այստեղի կառավարությունը հնի պես իրար դեմ է հանում Կովկասի ժողովուրդներին՝ գալով անտեր մնացող մթերքին՝ պետք է տեր դառնալ, որովհետև ռուս զորքը փչացնում է թշնամու նման: Վեց բատալիոնին իրավունք տվին ժամանակին, բայց ոչ մի դյուրություն չտվին: Այսօր 65.000 դասալիք ունինք, ո՞ր ուժն է նրանց հավաքելու, որ կորպուսը կազմվի: Հանգստի եկածների կեսն էլ փախչում է: Հազիվ վեց ամսում կարողանանք դասալիքներին հավաքել: Գալով թուրքահայ ուժին, ես չէի կարծում թե ֆրոնտը այսպես շուտ կփչանա: Միտք ունեի շուտով զորք կազմել զարկել Սդերդ, բայց չեղավ: Դուք ասում էք, որ զորքը ինքնապաշտպանության համար է, բայց նախ երբ կամենան հարձակողականի կդառնան և երկրորդ. եթե իմ ուժը արհամարելու լինին՝ ես չեմ հանդուրժիր, կհարձակեմ: Հետո ասում են միլիցիայի խնդիր կա, բայց ո՞վ տվավ կոմիսարիատին ռազմական ուժ ստեղծելու իրավունք, //-332 ո՞րն է նրա իրավասությունը այդ խնդրում, այդ իրավունքը վերից չէ եղած, այստեղ են տվել: Պետք է ճշտել, թե կազմվելիք ուժը ռազմական է, թե միլիցիա: Մեր ընտրած մարմինը դիվիզիա կազմել չի կարող, պետք են զինվորականներ: Երբ խրամատ մտան, ոչ ոք նրանց վրա իրավունք չունի, բացի կորպուսի հրամանատարից: Թ.Նազարբեգով և Մ.Արեշև գանգատվում էին, թե չեն կարողանում գործ անել. միջամտում են զանազան մարմիններ: Եթե այս պայմաններում եվրոպական ազդեցության էլ դեմ եք, ինչպե՞ս պիտի ապահովեք երկիրը: Երկու Խորհուրդների ընտրած մարմինը տնտեսական գործերի համար պետք է լինի և կոնտրոլ լինի ազգի կողմից օտարների մեզ վրա արած ծախսերի վրա: Երկրում կազմված բոլոր ուժերը պետք է մի իշխանության ենթարկվին:

Հ.Այվազյան. 1) Այն որոշումը որով Ազգային Խորհուրդը դեմ է գատ ձեռնարկների զինվորական գործի մեջ՝ թուրքահայերին չի վերաբերում: 2) Թուրքահայերն իրանք պետք է լուծեն իրանց խնդիրները: 3) Ութանդամ մարմինը պետք է թուրքահայերի հետ խորհրդակցաբար գործեր դիվիզիայի խնդրում... Թուրքահայերին վերաբերյալ խնդիրների քննության ժամանակ Արևմտահայ խորհրդից երկու անդամ պիտի ներկա լինին մեր նիստերին... Ութանդամ մարմինը լիազորություն ունի միմիայն դիվիզիայի կազմակերպությունը գլուխ հանելու, այնուհետև նա ոչ մի իրավունք չունի:

Որոշում. ...Որոշվում է վճիռ արձակել, երբ Արևմտահայ խորհրդի անդամները լիազորված գան Ազգային խորհրդի նիստին»:

№ 2 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն³⁶:

№ 42 ԽԲ

Թիֆլիս, 19 դեկտեմբերի 1917թ., 21:30-3:30

...«Բացակա են Հ.Տեր-Օհանյան, Ա.Ստամբուլցյան, Ղ.Տեր-Ղազարյան:

³⁶ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.89 շրջ.-98:

Ներկա է Արևմտահայ խորհրդի լիազոր մարմինը Ա.Թերզիբաշյան, Յ.Ամատունի, Յ.Գալիկյան, Սեպուհ, Յ.Վառվարյան, Յ.Յակոբյան, Վ.Փափագյան, Ս.Միրզախանյան, Կ.Սասունի: Բացի այդ ներկա են Յ.Օհանջանյան, Յ.Զավրյան, Անդրանիկ, Կ.Ղազարյան, Վ.Բաբայան, Պ.Լևոնյան...

Թուրքիայի հայոց զինվորական ուժի կազմակերպության և հարակից խնդիրներ:

Նախագահ Ա.Ահարոնյանը. ...Օտար պետությանց ներկայացուցիչները ...հատկապես իրենց շահերի համար են աշխատում հայ ուժերը կազմակերպել: Առանց ժխտելու նրանց աջակցության նշանակությունը մեր գործին՝ մենք կարող ենք նրանց գործակցել, եթե լինի // -333 շահերի զուգադիպում: Զինադադարից հետո թուրքերն իրենց ուժերը դարձնելու են անգլիացոց դեմ, միաժամանակ նրանք աշխատելու են վերագրավել Յայաստանը... Ինչքան զորք գրավենք մեզ վրա, այնքան ավելի օգուտ է նրանց: Կկոտորվենք թե ոչ, այդ կովում՝ նրանց համար միևնույն է: Այնուհետև... թուրքերը Կովասուն կարող են պայթել, նրանք պատրաստ սպասում են: Առայժմ շտապում են ազատվել ռուսներից... Քանի որ եվրոպացիք վատ եղան մեզ հետ, հայոց հարցը ինքներս մեր ձեռքը պիտի առնենք... Անգլիացիք կուզեն որ մենք մինչև Մոսկու քշենք, բայց ում ունի՞նք, պիտի անե՞նք - մտածելու խնդիրներ են...

Վ.Փափագյան կարդում է [հետևյալ] որոշումը. ...«Արևմտահայ խորհրդի ուժեղացրած ժողովը իր միջեն ընտրած 8 հոգիե բաղկացյալ լիազոր մի հանձնաժողով, որ Ռուսահայ Այգային խորհրդի գործակցությամբ կիրականացվի Յայաստանի ուժի կազմակերպություն: Խորհուրդը իր հանձնաժողովին տված է հետևյալ դիրեկտիվները.

1) թուրքահայերից և դրացի բարեկամ խաղաղ ազգաբնակությունից կազմվող ուժը կկոչվի Յայաստանի Զորաբաժին՝ Երկրապահ և կհատկացվի Յայաստանի սահմաններու պահպանության և երկրի խաղաղ տարրերու պահպանության: 2) Յայտարարել թրքահայության ընդհանուր զորակոչ: 3) Երկրապահ զորաբաժնի հրամանատարության համար առաջարկվում է Անդրանիկը, 4) Երկրապահ զորաբաժնի ռազմական բոլոր գործողությունները ենթակա են հայկական կորպուսի ընդհանուր հրամանատարության, 5) Երկրապահ զորաբաժնի կազմակերպություն և այդ առթիվ եղող արտաքին բոլոր հարաբերությունները, ինչպես նաև զորաբաժնի շարժումներ, որոնք քաղաքական բնույթ կկրեն կամ դուրս են երկրապահ զորաբաժնի առաջադրված նպատակներից, ամբողջապես ենթակա են Գեներալ Կոմիսարիատին և 16-ի հանձնաժողովին: 6) ...Բանալ անմիջապես զինվորական հրահանգիչների պատրաստող գործնական կուրսեր թուրքահայ աշակերտների համար»³⁷:

Որոշված է մի կոչ հրապարակել Արևմտահայ խորհրդի, կոմիսարիատի և դիվիզիայի հրամանատարի ստորագրությամբ: Բոլոր մնացած խնդիրները

³⁷ Տե՛ս որոշման վերապատումը. Այվագյան Յ., նշվ.աշխ., էջ 115:

կորոշէ հատուկ մարմինը, որ պիտի կազմվի ռուսահայ և թուրքահայ ութանդամ մարմինների ընտրությամբ, երեք անդամից, որոնցից երկուսը թուրքահայ և 1-ը ռուսահայ...

Ռ.Տեր-Մինասյան. ...Օտարները աշխատում են մեր համեստ գործն իրենց նպատակներին ծառայեցնել... Մտահոգում է բԺ.Յ.Ջավրյանի այն խոսքը, թե եթե մենք դրան չտանք նրան՝ կերթա Ն.Ժորդանիայի մոտ: Նաև Անդրանիկի այն խոսքը, որ եթե դեմը տեսնեն թույլին՝ կզարկեն... Օտարները. ինչպես ասորական բրիգադն իրենց ձեռքն են առել, այնպես էլ ուզում են առնել մեր ուժերը... [Այն-//334 ինչ,] Անգլիայից ոչ մի հույս չկա... Այստեղ կան բուլշևիկներ, վրացիք, թուրքեր, որոնց հետ պետք է ապրենք... Վան 500 մարդ կան, ...խնուս մի Մանուկ, մի Չոլո 300 մարդ են հավաքել, որ եղած են 1500, ...այդպես և Սուրադը երզնկան... Ես եղա պատճառ դիվիզիայի իրավունքն առնելու... [Այն] ուզեցանք, որ զենք ստանալ կարողանանք, ...ասենք մի մարդ գտնենք, պետ նշանակենք, որ անհրաժեշտ իրերն ստանա: Դիվիզիայի պետն այստեղ մի ֆիկցիա պիտի լիներ: Եվ եթե մեր շահն այդ է պահանջում, Անդրանիկը պետք է տեղի տա: Նրա անունը բավական է, որ այս ձեռնարկին ուրիշ բնույթ հաղորդվի: Նա չպետք է պետը լինի, բայց նա պարտավոր է իր հեղինակությամբ երկրի գործի շարքերը լցնել: Եթե կազմվելիքը երկրապահ գործ է, Անդրանիկն ինչպես է համաձայնում նրա պետը լինել: Սեպուհին ես խնդրած էի, որ մնար և մարդ լեցնելու աջակցեր: Ուրեմն երեք խնդիր կա. 1) Մենք երկրի գործի՞ն պիտի օժանդակենք, թե օտարներին ծառայենք, ...3) Պիտի ընդունե՞նք թուրքահայերի առաջարկը Անդրանիկին դիվիզիայի պետ նշանակելու...

Անդրանիկը ասում է. Վ.Փափագյան, Ռուբեն, Սեպուհ ութի կողմից ինձ առաջարկեցին դառնալ դիվիզիայի պետ: Ես նրանցից գրավոր մանդատ ուզեցի և գեներալ Պ.Ի.Ավերյանովի համաձայնությունը: Ինձ ասին, որ պետք է մեզ հավատաս: Երեք օր է անցած, և երեքից մեկն այսօր ասում է թե անջատ գունդեր պետք է կազմել, ի՞նչ պատահեց, ինչու՞ վճիռը փոխեցին: Ինձ ասին արդեն եղած է պրիկազ: Չեն կարծում որ Յ.Ջավրյան ինքնագլուխ լինի հանած այդ պրիկազը: Հայաստան դիակ չմնաց, գիշատիչները կերան: Հիմա ձեզ գլխին կպատեն: Ո՞վ ասավ, թե դուք բաժին չունեք Հայաստանից, ինչու՞ Ս.Մամիկոնյան այդ տեսակ խնդիր է հանում դիվիզիայի առիթով: Այստեղ բաժնի հարց չկա: Հաշտություն կնքեք-չկնքեք՝ ձեզ պիտի կոտորեն: Մինչև ձեր ապահովությունը մեզ պետք է ապահովեք: Տվեք մեր գաղթականությանը հող, տուն, հաց: 80 հազար դասալիք ունիք, 160.000 զինվորացու ունիք, բայց քանի՞ մարդ ունի ձեր կորպուսը՝ 9.000, ե՞րբ կհավաքեք 32.000-ը, ինչո՞վ պիտի ուժ կազմեք: Թուրքերն էրզրում վերցնեն, 600 թնդանոթը նրանց կմնա: Սիրտս կարյունի, երբ կմտածեմ: Բայց թուրքն ևս ուժասպառ է. ձմեռ է, ձյուն և ուշ կգան: Արևմտահայ խորհուրդը առաջարկներ է բերել, քննեցեք: Գալով ինձ՝ կարող եք գրել, թե մենք հակառակ ենք՝ թող հետ առնեն:

Պ.Լևոնյան հայտնում է, թե Յ.Զավրյան է եկել և հրաման ստացել դիվիզիայի...

Անդրանիկ ասում է, թե Հայաստանի կոմիսարիատն իրան առաջարկում է գնդապետներ, տալիս է զենք ու հագուստ: Սուրադ հեռագրում է, որ եթե մինչև ամսի 20-ը 2.000 մարդ չհասցնենք, թողնում է դիրքերն ու հետ է գալիս: Եթե անունս ընդհանուրի շահերին վնաս է, խնդրեմ հանեք անունս, որ չասեն, թե դու էիր պատճառ: Իմ կարծիքով ազգի բոլոր ուժերը պետք է լարել... //-335

Դուք մտածում եք հիվանդը տասն օր ավել ապրի՝ հետո մեռնի: Մեր ժողովուրդը հետ քաշելու համար ուժ է պետք: Դուք ուժ կազմել չկարողացաք, եղածը փախան: Ասում եք ճամբաները կկտրեն, բայց երբ Կովկասը սովի մատնվի՝ վրացին էլ քաղցած կը մնա: Եթե ֆրոնտը չպահվի, վրացիք էլ պիտի ստիպվին կռվելու: Վտանգ կա նաև Պարսկաստանից՝ Մակվի կողմից: Այս ժողովուրդը պետք է մեռնի, 15 ամիս առաջ ասի. «ինքնապաշտպանություն», ոչ ոք չլսեց: Հեռավոր տեսություն չունեցաք, 9-10 ամիս է թուրքը զինվում է, դուք չմտածեցիք: Հեղափոխականներդ էլ պիտի ստրուկ լինիք: Ձեզ պիտի ուտեն: Ձեզ տեր չկա. ռուսը չի մնա, կմնա ձեր Թ.Նազարբեգովը և քայքայված կորպուսը: Դուք ինտելիգենտներդ³⁸ ձեր դերի մեջ եք, ես իմ հանդգնության մեջ եմ: Չեմ ուզում տալ իմ ժողովրդիս մնացորդը: Ճամբա տվեք դեպի Ամերիկա, երթանք. մնացեք ձեր վրացու և թուրքի հետ: Հեղափոխականներդ անբարոյականացրիք ողջ Ռուսաստանը: Չմտածեցիք ձեր անցյալը, թե որքան ռուս է զոհվել մինչև հայն ու վրացին ազատվել են: Սոցիալիստներդ մոռացաք բոլորը. քայքայեցիք երկիրը, շերտին առաք ամենքդ ու բաժնեցիք: Ռուսը ասում է. ահա ձեր երկիրը ձեզ եմ թողնում, և երեքիդ էլ զինում է: Պիտի մեռնիք: Բան ունիք ոգևորիչ, այն ասեք: Մեռնենք տղամարդու պես: Ասածներս իրականացել են, Աստված տա սուտ ասած լինեմ այս անգամ: Ռուսը, որքան և թույլ, դեռ ուժ է: Եթե Անդրանիկի անունը կվնասե՝ վերացրեք: Կառավարությունը և դուք իմ դեմս մեռած եք: Դուք մի կշիռ ունիք, ես մի անուն: Եթե գոռամ դասալիքին՝ պիտի հետս գա: Հարյուրավոր ռուսահայեր եկած են այս օրերս: Ասում եք դիսցիպլին չի եղած դրուժինայի մեջ: Բայց հաղթություն տարած են: Կանոնավոր զորքի դիսցիպլինը հիվանդ է: Չպիտի ազատիք. նահատակները հիշեցեք, մեր ժողովուրդն ապահովեք: Ամեն կողմից պիտի գան՝ մեր մնացորդն էլ կոտորեն: Ասում եք. միլիցիա, բայց ի՞նչ հրացան են տալիս, զվիցերական 5-ֆրանկանոց հրացան: Եվ կարգին միլիցիա էլ չկա: Ուրտե՞ղ գտնեմ Կ.Համբարձումյանի պեսները, որ անձնվիրությամբ կաշխատի: Համազասպը երեք ամիս է գնացել է հյուսիսային Կովկաս, մթերք ու դրամ է հավակած, մեկը չկա հարցնի, թե ի՞նչ ես անում: Եվ դեռ քաջալերանք կա լրագրի մեջ: Ահա հրամանը, ահա ես, խնդրեմ անունս հանեք, որ վնաս չլինի մեր ցեղին: Բայց իմ պատիվը ձերն է, ի՞նչ հիմքով ինձ պիտի մերժեն: Բայց ինձ բռնել ոչ ոք չի կարող,

³⁸ Արձանագրության մեջ գրվել է նրա արտասանությամբ՝ ինտելիգենտներդ:

կերթամ մինակ Բաղդադ, այնտեղ կկռվեն անգլիացիների կողքին: Չեք մտածում ֆիզիկական գոյության մասին, բոլոր սոցիալիստներդ ալ միասին պիտի կոտորվիք: Ամեն վայրկյան սրտիցս արյուն է գնում, որ լսում եմ թե 600 թնդանոթ անտեր է մնացած: Ի՞նչ բուշկիկ. ամբոխ է, որ ծախում է հայրենիքը...

Կ.Ղազազյան. ...Եթե մենք մեր ընթացքով տեղիք տանք թուրքերին՝ վրացիներն իրենց ֆրոնտը կփոխեն և մենք կմնանք մին-մինակ: //-336

Անդրանիկ նկատում է. Վրացիները վերջին պահուն բարեկամ չեն ձեզ...

Պ.Լևոնյան. ...Ասում եք Անդրանիկի անունը կգրգռի: Նշանակեք նրան՝ ով շատ մարդ կհավաքի, մեզ մարդ է պետք: Անդրանիկը մեր հերոսն է, որ ժողովուրդ կարող է քաշել, փոխանակ բարձրացնելու՝ ասում ենք վտանգավոր ես: Որքան ուժ ունենք, և ինչ պակասը կա՝ պետք է օգտագործենք: Անդրանիկը գյուտ է, եթե չլիներ, պիտի ստեղծեինք: Կարծում եք, թե բավական է կարգադրեք և ձեզ կլսեն: Ենթադրենք, թե ամենքը մեր դեմ են, կոտորվե՞նք: Ես դեմ եմ: Միակ ճամբան գեների ճամբան է: Եթե կարողանանք կապվել անգլիացոց հետ՝ սա մի փրկություն կլինի: Խնդրում եմ, եթե դուք ընդունակ չեք, թողեք, որ ուրիշներն անեն: Պատասխանատու վայրկյան է: Այսօրվանից ես այլևս չեմ ենթարկվում Ազգային խորհրդին, և ինքս էլ գնում եմ Անդրանիկի հետ...

Որոշում. Նախագահը քվեարկության է դնում Ազգային խորհրդի կողմից իբր ցանկություն. «կազմել թուրքահայերից մի դիվիզիա»: Այս առաջարկը մերժվում է: Մերժվում է և թուրքահայերի առաջարկը՝ «կազմել թուրքահայերից երկրապահ զորամաս»:

Հինգ ձայնով անցնում է հետևյալ բանաձևը. «Ազգային խորհուրդը ցանկալի է համարում կազմել Հայաստանի զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր»: Նկատելով, որ թուրքահայերի և Ազգային խորհրդի ընդունած բանաձևերի միջև տարբերություն կա, Խորհուրդը որոշում է, որ Արևմտահայ Խորհրդի ընտրած 8 անդամները և Հատուկ կոմիտեի 8 անդամները երեքական հոգի առաջարկեն, որոնք և մշակելու են մի ընդհանուր բանաձև՝ իբր համաձայնեցնող մի մասնախումբ:

Պրոֆ.Յ.Յակոբյան նկատում է, թե իրենց առաջարկը իրենց ժողովում անցած է միաձայնությամբ, մինչդեռ Այգային խորհրդի առաջարկը 15-անդամանոց մի մարմնի 5 անդամի ցանկության ձևակերպությունն է միայն, ուստի պետք է խորհրդակցեն այդ բանաձևի, ինչպես և համաձայնեցնող մարմնի մասին:

Ժողովի ընթացքում ուշ լինելու պատճառով շատ անդամներ և հրավիրյալներ հեռանում են»...

№ 3 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն³⁹:

№ 43 ԽԳ Թիֆլիս, 20 դեկտեմբերի 1917թ., 11:00 //-337

...«Բացակա են Հ.Տեր-Օհանյան, Ա.Ստամբուլցյան, Ղ.Տեր-Ղազարյան, Ռ.Տեր-Մինասյան, Ա.Բաբայան: Նիստի ներկա են բացի անդամները՝ Խ. Կարճիկյան, Վ.Բաբայան, Հ.Ջավրյան և Արևմտահայ խորհրդի կողմից նախորդ նիստին ներկա եղած ութ հոգին: Նրանց թվում՝ Անդրանիկը...

Նախագահ Ա.Ահարոնյանը քննության է դնում թուրքահայ միացյալ, թե անջատ զորամասերի խնդիրը, որ նախորդ ժողովում մնացել էր անվճիռ...

Անդրանիկ ասում է, թե հաստատ տեղեկություն կա, որ 45.000 հրացան, 3.000 մարդու ամեն պատրաստություն, 900 ձի և այլն կան Կարին, Մամախաթուն, որ հրամանատարը ցանկացել է մեր ձեռքը գա: Շտապենք որ չկորցնենք...

Կոմիսարիատին իր գործերի կարգադրության համար տրված է իրավունք կազմել 4 գունդ և մի գունդ պահեստի, որպեսզի մեր հարևանները չասեն, թե սա ի՞նչ նոր զորամաս է: Երբ այդ դիվիզիան կազմվի՝ ենթարկվելու է մեր կորպուսի հրամանատարին: Այդ գնդերը նրա հրամանով պիտի շարժվեն: Եթե հարձակվեցին, պիտի կռվի: Եթե ասեն, որ այդ գնդերը երկրի պահպանության համար են, կպատասխանեն՝ ֆրոնտով կպահվի երկիրը: Կարելի է հիմնկվանից ասել, թե այս մասն այստեղ պիտի լինի, այն մասը այնտեղ: Այս դիվիզիան գատ է մինչև կորպուսի մեջ մտնելը: Սա միլիցիա չէ, եթե միլիցիա լիներ, ոչ թնդանոթ, ոչ գնդացի և ոչ ձիավոր կտային, կտային 5-ֆրանկանոց զվիցերական հրացան և վերջացավ: Փամփուլտը հատնելուց հետո ինչ կարելի է անել այդ հրացանով, երբ թշնամին մաուզեր և մոսին ունի: Եթե կոմիսարիատին ասեն՝ դիվիզիայի տե՞րն ես, պիտի պատասխան է. մինչև ֆրոնտ երթա, այնուհետև ենթակա է կորպուսին...

Ա.Հարությունյան. ...[Քանի որ օտարները դրամ են տալու,] գործը մեկ պետք է լինի, որ անջատ նպատակներին չծառայե: ...Օտարի օժանդակությունը մեզ չպետք է պարտավորեցնե նրանց ծառայել: Օրինակ՝ գնալ Մոսուլ, որ չպետք է լինի: Նա պետք է լինի ազգային մարմինների կոնտրոլին ենթակա, այդ հսկող մարմինը կարող ենք կազմել...

Ա.Երզնկյան. ...Հիմա լսում ենք, որ դաշնակիցներից դրամ պետք է ստանանք: Մեզ տանում էք փակ աչքերով. կուսակցական շրջանակներում սկսվել են դժգոհություններ: Իրավունք ունին պահանջելու, որ մեզանից թաքուն գործեր չարվին: Ջուր չէ, որ սոցիալիստ հեղափոխականները չեն գալիս մեր նիստերին:

Սեպուհ նկատում է. Վախենում են, որ այսօր էլ որոշ եզրակացության չգանք: Մենք երթանք, դուք խոսեք, երբ համաձայնության գաք՝ մեզ հայտնեք... //-338

Ա.Մամիկոնյան. ...Ամիս ու կես առաջ հակառակ էինք թուրքահայերից

³⁹ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.98-103 շրջ.:

որևէ զորք կազմելուն: Յետո... եկանք այն որոշման, թե կարելի է զատ-զատ գնդեր կազմել... Ի՞նչ կարիք կա, որ հատուկ թուրքահայ զորք լինի, ...[այն] կարող է գրգռել թուրքերին... Ազգային զորքերի կազմությունը մեր ու վրացիների մոտ կաղում է ոգևորության չգոյությամբ: Կորպուսի մեջ լցնելով ազատվում ենք պատասխանատվությունից... Գաղտնիք չէ, որ [թուրքահայ դիվիզիան] կազմվում է հյուսաստոսների ճնշման տակ: Կարծում են, թուրքահայ զորքն ավելի դյուրությամբ կենթարկեն դրանց: Կոմիսարիատին տված դրամը օտար դրամ է և մեզ օգտակար չէ: Դրանից միևնույն շատ կլինեն՝ օգուտ ոչինչ: Գալով այն մտքին, թե այդ զորքը կարող է երկիրը պահել սեպարատ հաշտությունից հետո՝ երազներ են: Թուրքիան հեշտությամբ կգրավե Յայաստանը...

Յ.Ամատունին. [Ջատ գնդեր] ինձ համար ուժ չեն... Եթե մեր երկիրը վերադարձնեն թուրքերին, գիտենք, որ չենք կարող այդ ուժով պաշտպանել, բայց ժողովուրդը կորցնել չենք ուզում, նրա նահանջը կապահովենք... Այդ զորքի կազմությունը մեր կյանքի պահանջն է և ոչ օտար թելադրանք... Երկրում մեզանից անկախ կազմվում են զորամասեր, դրա դեմն առնել ոչ ոք չի կարող, և ոչ այդ ուժերը կարող ենք կորպուս մտցնել...

Անդրանիկ խոսում է հուզված. Վերջին անգամն է խոսում եմ ձեզ հետ: Պահպանողական թե ոչ, ձեր բոլոր օժապտոյտները ձեզ չեն փրկելու՝ ոչ ոքի խաբել չեք կարող: Քանի որ դրությունն այսպես է. դուք զանազան տարրերից եք կազմված. նախկին ասածներս չլսեցիք, այսօր կատարվեց ձեր աչքի առջև. ասի՝ այստեղ ինքնապաշտպանություն՝ ուշ չդարձրիք: Եթե ինձ հայու զավակ կնկատեք, ես վաղը գնում եմ Երզրում. ես, ձեր անմիտը, թույլ տալի՞ս եք, որ գնամ, խնդրեմ, գրավոր պատասխանեք, իրավունք տալի՞ս եք, որ գնամ այնտեղ հասարակ զինվոր լինեմ: Իսկ եթե ասեք. քո անունը վտանգավոր է, մի գնար, խնդրեմ, այդ էլ ինձ գրավոր ասեք: Եթե չեք տա, ես խզում եմ իմ կապերս [բոլորիդ հետ]: Մինակ եմ գնում իմ ժողովրդի պաշտպանության համար: Տալի՞ս եք իրավունք:

Դառնալով Յ.Ջավրյանին. - Բժիշկ, քեզ էլ ասում են, որ ինձ տված պաշտոնից հրաժարվում եմ, այդպես ասա, ուր պետք է: Ձեռքից գնում է թե այստեղ, թե այնտեղ:

Մեկնում է...

Կ.Սասունի. Խնդիրն իսկապես շատ ենք դանդաղեցնում: Եթե Յայաստանի կոմիսարիատը իր միլիցիան մեծացներ, ոչ ոք քաղաքական խնդիր չէր հարուցանի, մանավանդ մարդ և դրամ չուզեին: Եթե այստեղից բոլոր թուրքահայերին շարժենք, ամենաշատը 3.000 մարդ պիտի ուղարկենք: Մեծ մասը մեր զինվորացուների՝ երկրումն են: Ով կուզե լինի հրամանատարը՝ Անդրանիկ թե մի ուրիշ, //-339 վանեցին Ախլաթ չի գնալու: Իր ընտանիքի համար կմեռնի և նեղն ընկած ժամանակ կգաղթեցնի տունը...

Յ.Ջավրյան. ...Մեր դրամով անհնարին էր [5.000 հոգուց ավելի միլիցիա] կազմել, ահա թե ինչու դիվիզիա կազմել որոշեցինք... Յրամանատա-

րին հայտնել ենք, ...բայց վերջն այդ բանը գլուխ չեկավ, որովհետև հրամանատարը շատ էր զբաղված և դժգոհ էր, որ գործերը դանդաղ են առաջ գնում... Ոմանց դավադրություն է թվում կոնսուլների հետ բանակցելը դրամի մասին, ...[թեև] դրամական խնդրի մասին նրանց հետ մենք անջատ խոսակցություն ունեցած չենք: Գլխավոր հրամանատարը... մարդիկ է ուղարկել Պարսկաստան անգլիացիներից դրամ ուղելու ռուս զորքի համար: Նա խնդրում էր 500 միլիոն ռ.: Այն ժամանակ զինվորական կոմիսարն... խնդրել էր 20 միլիոնի վարկ: Անգլիացիք ասել էին, որ մենք դրամը տալիս ենք կոմիսարիատին, ...թե բոլոր ազգայնացած զորամասերը մենք կպահենք, կտանք բոլորի ռոճիկը, մնացածը հոգացք դուք: Կովկասի կառավարությունն էլ... թղթադրամ խնդրել: Չեն ծածկում, որ նրանք ցանկանում էին թուրքահայ ուժերից օգտվել, բայց առաջին իսկ քայլին ես ասի, որ եթե դուք մեր գործերին միջամտեք, այն ժամանակ կխզենք մեր հարաբերությունը ձեզ հետ... Ասում եք... մեր դիվիզիան... կարող է թուրքերին գրգռել... [Իսկ նրանք] լավ պատրաստվում են. 10-15.000 գերի զինվորներ... հավաքվել են Կարին, ...և սպասում են հարմար թուրքի... Որքան կուզեք խոհեն ու զգույշ եղեք, նրանք պատրաստում են իրենց գործը... Ամեն բան ունինք գունդերը կազմելու, եթե միացած չլինեն՝ անգլուխ գնդեր կլինեն... Պետք է բոլորին միացնել, դարձնել մի դիվիզիա... Ես այնքան ժամանակ խնդրում աղաչում էի՝ միջոցներ չէիք տալիս... Հնար չկար այլևս համբերելու...

Ա.Երզնկյան. ...Դաշնակիցներին կապվելով՝ այլևս հետ դառնալ չենք կարող: Այդ դաշնակիցներին ճանաչում ենք. մեզ ծախեցին, և երաշխիք չկա, թե նորից չեն ծախելու: Միևնույն է պիտի հեռանաք երկրից: Ցանկալի է, որ դիվիզիա ունենաք Հայաստանի կոմիսարիատին կից, թուրքահայերից, լավ իմանալով, որ հետ դառնալ չպիտի կարողանանք բռնած ճամբից... Հատուկ հրամանատարություն ստեղծելու պետք չկա, դա ավանտյուրա է: Առայժմ թող գնան, հետո կտեսնենք, թե ինչ են անելու...

Դրվում է հայոց միլիցիան զորքերի պետի ընտրության խնդիր:

Հ.Արազյան. Թյուրքահայերը համաձայն են, որ ժողովի այս կազմով զորքերի պետ ընտրվի, քանի որ մի կողմից թուրքահայ մասնաժողովն է Ց հոգուց բաղկացած, մյուս կողմից՝ Ազգային խորհուրդը...

Հ.Զավրյան. Եթե կազմվելիքը զուտ միլիցիա լինի, սպաներ չեն գտնվի, քանի որ անվայելուչ է նրանց համար և անհրապույր ծառայել միլիցիայի մեջ: //-340

Քվեարկվում և անցնում է հետևյալ որոշումը. «Կազմակերպվելու է Հայաստանի երկրապահ զորամաս: Այդ կազմակերպությունը գլուխ բերելու համար ընտրվում է մի մարմին երկու խորհուրդների կողմից, որ գործելու է Կոմիսարիատին կից և նրա աջակցությամբ: Ջորամասը կազմվելով՝ հետզհետե հանձնվում է հայկական կորպուսին»:

Դրվում է Երկրապահ զորքի հրամանատարի ընտրության խնդիրը: Երկու խորհուրդներից քվեարկության մասնակցում են 6-ական մարդ,

ընդամենը 12 հոգի: Առաջարկվում են երկու թեկնածու. Անդրանիկ և գնդապետ Մ.Սիլիկյան: Գաղտնի քվեարկությամբ 9 ձայնով ընդդեմ երեքի՝ ընտրվում է Անդրանիկ:

Հայաստանի երկրապահ զորքի կազմակերպության համար ընտրվելիք մարմնի կազմը որոշվում է երեք անդամից: Նրանց ընտրությունը թողնվում է Արևմտահայ Բյուրոյի և Ազգային խորհրդի հատուկ կոմիտեի խառն ժողովին»:

№ 4 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն⁴⁰:

№ 45 ԽԵ Թիֆլիս, 22 դեկտեմբերի 1917թ.
 «Բացակա են Ղ.Տեր-Ղազարյան, Ա.Երզնկյան: Ներկա է Անդրանիկ:
 ...Անդրանիկի միջադեպը:

Անդրանիկ ասում է. Եկա մի քանի խոսք ասելու: Կյանքիս մեջ անձնական վիրավորանք տված կամ ունեցած չեմ: Երեկվան ժողովում ես խիստ խոսեցի: Ի՞նչ կարիք ունի մարդ վիրավորելու լեռնցու նման: Դուք օրվան կառավարությունն եք և մտածում եք ազգի մասին: Ես ևս մտածում եմ: Ասացեք. գնա, մեռիր, երթան մեռնեն մեր ցեղի համար: Գալով փառքին՝ ոչինչ է: Ես ձեր կեսի չափ մտածած թող լինեն, բայց հրդեհը մոտ է, մարենք միասին: Եկած եմ ներողություն խնդրելու, որ ոչ ոք վիրավորված չզգա ինձանից: Լսած եմ. դժգոհ եք կոչ անելուցս: Եթե կոչս վնասակար է, ասեք: Տասերկու հեռագիր եմ տված, մարդիկ պիտի գան այստեղ, հաց ուտեն, ռոճիկ չեն ուզելու և ազգի համար մեռնելու են: Ես հրաժարվեցի պաշտոնից՝ գեներալ Թ.Նազարբեգով ասավ. թող հալածանքը քեզ չվրդովե, անցիր գործի գլուխ: Եկած եմ իմանալու, թե ի՞նչ պետք է անենք միասին: Այս է իմ վերջին խոսքը:

Նախագահը. ...Մեզ համարում ես կառավարություն, և մենք ենք իրոք պատասխանատու ճանաչվում... Որովհետև դու մեծ անուն //--341 ունիս, մենք վախենում ենք, որ դրանից մի վնաս հասնի մեզ... Ուր էլ լինես՝ չնոռանաս, որ Ազգային խորհուրդը վախենում է պատասխանատվությունից:

Անդրանիկ. Թուրք ճակատն ավելի թույլ է, քան Կովկասի թուրքը: Եթե իմա-նայի, թե ձեր սառնասրտության շնորհիվ մի օր պիտի կարողանայինք երևան գալ պատրաստ՝ ոչինչ: Բայց դուք գործնական քայլեր չեք անում:

Ս.Հարությունյան... Գեներալ Թ.Նազարբեգով անջատ քայլեր չի անում, թեև քեզանից բարձր է իր պաշտոնով:

Սրանով սպառված է համարվում միջադեպը»...

⁴⁰ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.107-109:

№ 5 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն⁴¹:

№ 62 ԿԲ

Թիֆլիս, 14 հունվարի 1918թ., 8:30

«Բացակա են Վ.Տեր-Օհանեան, Ս.Մամիկոնյան: Ներկա են՝ Խ.Կարճիկյան, Անդրանիկ:

Անդրանիկի գեկուցումը:

Անդրանիկ. Չգիտեմ ձեր ուզած խաղաղությունը ինչո՞վ պիտի երաշխավորվի, և մեր ժողովուրդը նաև խաղաղության ժամանակ ինչպե՞ս պիտի ապահովվի: Այդ ձեր գործն է: Բայց զինվորներին հագուստ, հաց կարո՞ղ եք ապահովել: Լսած եմ, որ երգրում 30.000 զորքի համար 6 ամսվան պաշար կա: Տրապիզոնի ճակատում մարդ չկա, չկա և մթերք: Ֆրոնտում շատ քիչ ուժեր կան, բայց քիչ մթերք: Խնուս և Վան նույնպես շատ քիչ ուժ կա, Ալաշկերտ ևս շատ չնչին ուժեր են: Ալճավազ և Ախլաթ քրդերն ազատ բանակցում են թուրքերի հետ: Վաղն ինչ կլինի՝ չգիտեմ: Մարդիկ են ուղարկել գավառ՝ զինվոր հավաքելու: Երևանի կողմերը Հայաստանի ապահովության խորհուրդը հայտարարել է ժողովրդին, թե զինվորացուների ընտանիքներին ապահովություն չկա, եթե նրանք լսեն Անդրանիկին: Այս գործերի կարգադրության մասին մտածեք»:

№ 6 Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն⁴²:

№ 69 ԿԹ

Թիֆլիս, 5 փետրվարի 1918թ.

«Բացակա են Ս.Հարությունյան, Ա.Երզնկյան, Ղ.Տեր-Ղազարյան, // -342 Հ.Տեր-Օհանյան, Պ.Զաքարյան, Ս.Մամիկոնյան: Ներկա են՝ գեն.Թ. Նազարբեկյան, գեն.Գ.Կորգանյան, Ջինվորական խորհուրդի գործադիր մարմինը, Պ.Լևոնյան, Ա.Պապովյան, Անդրանիկ, Ս.Արզումանյան, Գ.Չամոյան, Գ.Ղազարյան:

Կացությունը Բաբերդի և Երզնկայի անկումից հետո:

Անդրանիկ. Կարծեմ ուզում եք պաշտպանության ծրագիր մշակեք, պիտի ասեք մեր անելիքը, մենք ծրագիր կմշակենք: Բաթումը շուտով կվերցնեն: Մեր ժողովրդի ոգևորությունը մեռցրիք: Իմ կարծիքով, պետք է պահել Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս գիծը, ինչպես և մինչև Երևան: Պարսկաստանի գիծը կտրված է, ուստի ամենից վտանգվածը Վանն է: Պետք է բոլոր սպաներին ֆրոնտ ուղարկել, չգնացողներին վռնդել: Ջինվորական զանազան մարմինները վերացնել: Մինչև այժմ թուրքերին զենք ծախող հայեր կան. այդպիսիներն գնդակահար անել: Եթե Խնուս-Կարին 6.000 մարդ հանեք, մենք ապահովված ենք: Կովկասի վտանգը Արդահանի կողմից կլինի: Կաղզվանի ճանապարհը պունկտեր բանալով պետք է հասնել մինչև Խնուս, Մանազկերտ: Չինգիլի՝ թեկուզ և ուժով պետք է բանալ, Երևան 2.000

⁴¹ ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.137 շրջ.-139:

⁴² ՀԱԱ, ֆ.222, ց.1, գ.141, ք.146-147 շրջ.:

մարդ կան, որոնց կարելի է [գործադրել] այդ նպատակով: Մեր կացության վտանգն այն է, որ պաշտպանության գիծը շատ է երկար Բաթուն-Օլթի-Ջուլֆա: Այնուհետև մենք չգիտենք, թե ինչ կա ամեն պահեստում: Ունին 11.000 մարդ, եթե ինտ[ե]լիգենտ ուժեր չուղարկեք տելեֆոնի համար, մենք կկտրվենք:

Գեմ.Թ.Նազարբեկյան. ...Մեր ուղարկած լրացումներից ոչ մի մարդ չի հասել: Այստեղ III գնդից ամեն օր մարդիկ փախչում են: ...Թուրքերը փոքրիկ ուժերով մեզ կստիպեն նահանջել, քանի որ մեր ուղարկածներն անվարժ են:

Մ.Արզումանյան. ...Ղարաբաղցիք որոշել են Թիֆլիսի ճանապարհը ապահովել, ինքը համաձայն է ճամբան բանալ, եթե նրան մեր կորպուսից տան 500 մարդ:

Որոշում. Այդ ուժը տալ Մ.Արզումանյանին III գնդից և ձիավոր գնդից»...
// -343

©

20 էջ

«Լրաբեր հասարակական գիտությունների»: Երևան, 2014, N° 3 (642), էջ 323-343: